



## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ք. Երևան  
2 մարտի 2020թ.

ԲԴԽ-6-Ո-Կ-3

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

#### ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՆԱԻՐԱ ՄԻՇԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆԻՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բարձրագույն դատական խորհուրդը, ծանոթանալով Արդարադատության նախարարի՝ «ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նաիրա Մխիթարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ ՀՀ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին» 2020 թվականի փետրվարի 24-ի թիվ N20-Ա որոշմանը և կից ներկայացված փաստաթղթերին

### Պ Ա Ր Զ Ե Ց .

Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել քաղաքացի Էդմոնդ Գրիգորյանի հաղորդումը: Էդմոնդ Գրիգորյանը 17.12.2020թ. դիմում է ներկայացրել Արդարադատության նախարարին, որի շրջանակներում դժգոհություն է հայտնել թիվ ԼԴ/2137/02/17 քաղաքացիական գործի ընթացքից և դատավորի գործողություններից:

Ուսումնասիրելով վերոնշյալ դիմումը՝ Արդարադատության նախարարը 14.01.2020թ. թիվ 5-Ա որոշմամբ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նաիրա Մխիթարյանի նկատմամբ հարուցել է կարգապահական վարույթ:

Արդարադատության նախարարի 24.02.2020թ. թիվ N20-Ա որոշմամբ միջնորդություն է ներկայացվել Բարձրագույն դատական խորհրդին՝ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նաիրա Մխիթարյանին կարգապահական

պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 150-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Բարձրագույն դատական խորհուրդը քննում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունն ստանալու պահից մեկամսյա ժամկետում»:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ «Բարձրագույն դատական խորհրդի նախագահը հրավիրում և վարում է Բարձրագույն դատական խորհրդի նիստերը, ստորագրում է Բարձրագույն դատական խորհրդի որոշումները, ներկայացնում է Բարձրագույն դատական խորհուրդն այլ մարմինների հետ հարաբերություններում, ինչպես նաև իրականացնում է Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված այլ լիազորություններ»:

«Բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին» 04.06.2018թ. թիվ ԲԴԽ-13-Ո-24 որոշման հավելվածի 103-րդ կետի համաձայն՝ «Դատավորին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունը և վարույթի նյութերը ներկայացվում է Խորհրդի նախագահին, ով Օրենքով նախատեսված մեկամսյա ժամկետում քննարկման համար նշանակում է Խորհրդի նիստ: Միջնորդությունը և վարույթի նյութերը Խորհրդի անդամներին է ներկայացվում նիստից առնվազն 10 օր առաջ»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասով, 150-րդ հոդվածի 1-ին մասով և «Բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին» 04.06.2018թ. թիվ ԲԴԽ-13-Ո-24 որոշման հավելվածի 103-րդ կետով,

## **Ո Ր Ո Շ Ե Ց .**

Արդարադատության նախարարի կողմից ներկայացված՝ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նաիրա Միշայի Մխիթարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդության քննության կապակցությամբ հրավիրված Բարձրագույն դատական խորհրդի նիստը նշանակել 2020 թվականի մարտի 5-ին ժամը 16.<sup>30</sup>-ին՝ Բարձրագույն դատական խորհրդի վարչական շենքում /ք. Երևան, Կորյունի 17/:

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Ռ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ**